

ՆՈՅԵՄԲԵՐ 29Ի

ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

ԿԻՊՐՈՍԻ ՄԷՋ

Նոյեմբեր 29ի երեկոյեան, Նիկոսիայի Մէճիք Բալլաս սրահին մէջ տօնուած է Սովիէթական Հայաստանի քսանհինգամեակը, խուռն բազմութեան մը ներկայութեան:

Անգլիերէն «Cyprus Mail» թերթը Դեկտ. 2ի իր թիւին մէջ ընդարձակ յօդուածով մը կ'անդրադառնայ այդ տօնակատարութեան, հրատարակելով նաև Որեւանի համայնապատկերին լուսանկարը: Հոնկէ կը քաղենք հետեւեայ մանրամասնութիւնները:—

Հանդէսին նախագահ Պ. Յ. Աճէմեան իր բացման խօսքին մէջ ըսած է. «Անդուգական բախտ մըն է հպարտութեամբ տօնել այս սարեգարձը, թէեւ մեր հեռու գանուիլը անխուսափելիօրէն շատ ցաւ կը պատճառէ ամենքիս»:

Օրուան գլխաւոր բանախօսը՝ բանաստեղծ Վահէ Վահեան ըսած է. ի միջի այլոց. «Մեր նպատակը, ամէն մարդկային էակի նպատակը՝ եղած է և է պատուաւոր կերպով ապրիլ ապահովութեան մէջ. ապրիլ՝ բուսկամութեան ստեղծագործ կեանք մը: Մեր ազգին երկար պատմութեան մէջ, ո՛չ մէկ ատեն մենք աշխարհակալական ձգտումներ ունեցած ենք. ընդհակառակը, մենք միշտ հզնւած ենք երջանիկ ըլլալու և ուրիշներն ալ երջանկացնելու: Նոյեմբեր 29ը մեզի տուաւ մեր իտէալներուն իրօղործումը: Մարդիկ մեզ ջարդեցին, բայց երբեք չկրցան սպաննել մեր իտէալը, և այսօր մենք կեցած ենք փառազանծ քսանհինգամեակի մը գիմար: Նոյեմբեր 29ը իրականութիւն մըն է, կ'ուզում որ բանաք ձեր աչքերը և տեսնէք իրականութիւնը: Ձեր նայւածքը դարձուցէք Արարատին, և դուք պիտի ներշնչուիք անցեալ դարերէն: Ոմանք խոհեմութեան խորհուրդ կուտան, թելադրելով որ բնաւ չխանդավառուինք ցարդ ձեռք բերուած արդիւնքներով: Բայց ո՛չ մէկ խանդավառութիւն չափազանցութիւն է ներկայ իրականութեան հանդէպ: Ես դէմ չեմ խոհեմութեան, բայց ո՞վ վիրաւորական պիտի չնկատէր անասումը այն յաւազգիմութիւններուն, որոնց հիացումով կը նային 200 միլիոն մարդիկ»:

Վեր. Յ. Տէր Մկրտիչեան իր ճառին մէջ ըսած է ի միջի այլոց. «1940 թուականին մեծ Չըրչիլը ըսաւ. «Մեզի գործիքներ տուէք և մենք պիտի աւարտենք գործը»: 1920ին մեր ղեկավարները նոյն բանը ըսին. — Տուէ՛ք մեզի մեր սուրբ նրկիրը, տուէ՛ք մեզի մեր նախահայրերուն երկիրը, իր վիշտերով, իր ցաւերով և ամէն ինչով, և մենք պիտի կատարենք գործը»:

Տօնակատարութիւնը ունեցած է նաև գեղայուեստական ճոխ բաժին: